Հավելված
ՀՀ կառավարության 2014թ.
ապրիլի 17-ի նիստի N 15
արձանագրային որոշման

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
Հայաստանի Հանրապետության կառավարության և Քուվեյթի Պետության կառավարության միջև Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությամբ գործող «Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ» պետական ոչ առևտրային կազմակերպությունում շինարարական աշխատանքների կատարման համար Քուվեյթի Պետության կառավարության կողմից նվիրաբերության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը (ներկայացված ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից. հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Կառավարական տուն 3) և **Քուվեյթի Պետության կառավարությունը** (ներկայացված Հայաստանի Հանրապետությունում Քուվեյթի Պետության դեսպանության կողմից. Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Հ.Քոչարի փողոց 7/3), (այսուհետ՝ Կողմեր)

ելնելով Քուվեյթի Պետության կառավարության կողմից բարի կամքի դրսևորումից և նվիրաբերության ցուցաբերման պատրաստակամությունից
ձգտելով ծավալել սերտ և արդյունավետ համագործակցություն
հիմք ընդունելով Կողմերի պաշտոնատար անձնանց միջև հանդիպումների ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունները, բանակցությունները և գրագրությունները,
նպատակ ունենալով բարելավել **Նախարարության ենթակայությամբ գործող «Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ» պետական ոչ առևտրային կազմակերպությունում** (այսուհետ՝ ՊՈԱԿ) անկողնային խնամք ստացող անձանց կեցության պայմանները,
համաձայնեցին հետևյալի մասին**.**

Հոդված 1
Պայմանագրի առարկան

Սույն պայմանագրով Կողմերը հաստատում են իրենց պատրաստակամությունը՝ համագործակցելու ՊՈԱԿ-ում անկողնային խնամք ստացող անձանց համար մասնաշենքի շինարարական աշխատանքների իրականացման ուղղությամբ:

Հոդված 2
Կողմերի պարտավորությունները

1) Դեսպանությունը պարտավորվում է.

1.1. ՊՈԱԿ-ում շինարարական աշխատանքների իրականացման նպատակով ապահովել ֆինանսական միջոցների տրամադրումը Նախարարությանը՝ մեկ միլիոն ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի չափով.
1.2. ապահովել սույն հոդվածի 1.1. ենթակետով նշված գումարի փոխանցումը սույն հոդվածի 2.4. ենթակետում ներկայացված բանկային հաշվեհամարին երեք փուլերով.

առաջին փուլում փոխանցվում է ընդհանուր գումարի 40%-ը՝ որպես կանխավճար, որն իր մեջ ներառում է նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմումը, հեղինակային և տեխնիկական հսկողությունը և շինարարական աշխատանքների մեկնարկը.

երկրորդ փուլում փոխանցվում է ընդհանուր գումարի 40%-ը՝ շինարարական աշխատանքների 60%-ը կատարվելուց և Նախարարության կողմից դրանց կատարման վերաբերյալ ծանուցում ստանալուց հետո.

երրորդ փուլում փոխանցվում է ընդհանուր գումարի 20%-ը՝ շինարարական աշխատանքներն ամբողջությամբ ավարտվելուց և Նախարարության կողմից
դրանց ընդունման վերաբերյալ ծանուցում ստանալուց հետո:

2) Նախարարությունը պարտավորվում է.

2.1. ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման, հեղինակային և տեխնիկական հսկողություն իրականացնող և շինարարական աշխատանքներն իրականացնող կազմակերպությունների ընտրությունը.

2.2. ապահովել շինարարական աշխատանքների մեկնարկը ս.թ. ապրիլ ամսվա ընթացքում և ավարտը՝ մեկ տարվա ընթացքում.

2.3. ապահովել ամբողջ ծրագրի բարեգործական որակման հետ կապված ընթացակարգերը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով արտոնություններից օգտվելու նպատակով:

2.4. ապահովել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի գանձապետական ստորաբաժանումում բացված արտաբյուջետային հաշվին Քուվեյթի Պետության կառավարության կողմից փոխանցված գումարների նպատակային տնօրինումը: Բանկային հաշվի տվյալները կներկայացվեն լրացուցիչ՝ ներքին ընթացակարգերն ապահովելուց հետո.

2.5. ապահովել շինարարական աշխատանքների հսկողությունը և վերահսկողությունը.

2.6. ապահովել սույն հոդվածի 1.2. ենթակետով նախատեսված աշխատանքների կատարման երկրորդ և երրորդ փուլերի ավարտից հետո շինարարական կազմակերպության կողմից կատարված աշխատանքների կատարողականների ընդունման և դրանց մասին Դեսպանությանը ծանուցելու գործընթացները.

2.7. ապահովել ՊՈԱԿ-ում անկողնային խնամք ստացող անձանց համար նախատեսված մասնաշենքի անվանակոչումը Քուվեյթի Պետության անունով:

Հոդված 3
Եզրափակիչ դրույթներ

Սույն պայմանագրի կատարման ընթացքում Կողմերի միջև ծագած տարաձայնությունները լուծվում են խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով:

Հոդված 4

Պայմանագրի գործողության ժամկետը և վաղաժամկետ լուծման հիմքերը

1) Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:

2) Սույն պայմանագիրը գործում է մինչև պայմանագրով նախատեսված աշխատանքների իրականացման ավարտը: Յուրաքանչյուր Կողմ կարող է լուծել պայամանագիրը՝ դիվանագիտական խողովակներով գրավոր ծանուցելով մյուս Կողմին: Պայմանագրի վաղաժամկետ լուծումն ուժի մեջ է մտնում ծանուցման օրվանից երեսուն (30) օր հետո:

3) Սույն պայամանագիրը վաղաժամկետ կարող է լուծվել, եթե մյուս Կողմը պարբերաբար խախտում կամ չի կատարում իր պարտավորությունները:

4) Չնախատեսված այնպիսի օբյեկտիվ հանգամանքներ ի հայտ գալու դեպքում (ֆորս-մաժոր), որոնք խոչընդոտում են պայմանագրով

նախատեսված աշխատանքների շարունակմանը, Կողմերը փոխադարձ համաձայնությամբ կարող են վաղաժամկետ դադարեցնել սույն պայմանագիրը:

Սույն պայմանագիրը ստորագրվել է ……. 2014 թ., կազմված է երկու բնօրինակով՝ յուրաքանչյուրը հայերեն, արաբերեն և անգլերեն լեզուներով, ընդ որում երեք տեքստերն էլ հավասարազոր են: Մեկնաբանման ժամանակ տարաձայնությունների դեպքում նախապատվությունը տրվում է անգլերեն տեքստին:

Հայաստանի Հանրապետության կառավարության անունից՝	**Քուվեյթի Պետության կառավարության անունից**
……	……..
Արտեմ Ասատրյան Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար	Բասսամ Մուհամմադ Ալ-Քաբանդի Հայաստանի Հանրապետությունում Քուվեյթի Պետության արտակարգ և լիազոր դեսպան